



# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 202/106-Ա « 23 10 2023 թ.

## ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 51-րդ կետը և ԵՊՀ գիտական խորհրդի աշխատակարգի 5-րդ կետի 2-րդ ենթակետը՝

հրամայում եմ՝

1. աշխատանքային լիազորությունների ժամկետի ավարտման պատճառով ԵՊՀ գիտական խորհրդի կազմից հանել Էմիլ Գևորգյանին, Շահեն Խաչատրյանին ու ԵՊՀ գիտական խորհրդի կազմում հաստատել Կենսաբանության ֆակուլտետի նորընտիր դեկան, կենսաբանական գիտությունների դոկտոր Կարեն Ղազարյանին, Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի նորընտիր դեկան, տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ Սարգիս Քելյանին:
2. Սույն հրամանի մասին տեղեկացնել ԵՊՀ գիտական քարտուղարին, աշխարհագրության և երկրաբանության ու կենսաբանության ֆակուլտետներին:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ռեկտոր՝

Հ. Վ. Հովհաննիսյան